Սալիկի սոսինձ BENZER

Նկարագրություն

- Մոխրագույն
- Հանքային
- Էկոլոգիապես մաքուր և անվտանգ

Բաղադրություն

Քվարցային ավազ, պորտլանդ ցեմենտ, ցելյուլոզային հավելանյութեր:

Նշանակություն

Նախատեսված է շինարարական ներքին (գիպս, գիպսակարտոն) վրա սալիկների (ծակոտկեն կերամիկական սալիկներ) փակցման աշխատանքների համար:

Մակերեսի նախապատրաստում

- Նախքան քսելը մաքրել մակերեսը կեղտից, փոշուց, յուղի և ներկի հետքերից:
- Աշխատանքից առաջ օգտագործվող մակերեսը թեթևակի թրջել՝ բացառությամբ գիպսակարտոնի:
- Խորհուրդ է տրվում օգտագործվող մակերեսը մշակել «ՇԵՆ» ֆիրմայի ակրիլայիմ կոնցենտրատով:
- 4-5 ժամ անց սկսել սոսնձման աշխատանքները:

Շաղախի պատրաստում

- Մաքուր տարայի մեջ լցնել 6 - 6,25լ ջուր՝ 25կգ չոր շաղախի համար:
- Աստիճանաբար ավելացնել չոր շաղախը և խառնիչի օգնությամբ խառնել մինչև համասեռ խառնուրդ ստանալը:
- Պատրաստի շաղախը 5 րոպե անց կրկին խառնել, որից հետո այն պատրաստ է օգտագործման համար:

Օգտագործում

- Համասեռ խառնուրդը մակերեսին քսել հատուկ ատամնավոր ծեփիչի օգնությամբ:
- Սվաղի հաստությունը պետք է լինի 3մմ-ից ոչ պակաս:
- Աշխատանքներն իրականացնել +10°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում:
- Աշխատանքներն ավարտելուց հետո գործիքները լվանալ ջրով:
- Օգտագործված պարկերը և շաղախի մնացորդներն աղբահանել սահմանված կարգով:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	+10°C-ից +30°C
Ջրի քանակ1կգ չոր շաղախի համար	240 - 250 մլ
Ջրի քանակ 25կգ չոր շաղախի համար	6 - 6,25 լ
Շերտի հաստություն	3մմ և ավել
Թաց շաղախի օգտագործման ժամկետ	3 ժամ
Շերտի 3 մմ հաստության դեպքում չոր շաղախի ծախս Նյութի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսի հարթության աստիճանից և քսվող ծե փամածիկի շերտի հաստությունից:	1 կգ / 0,2 մ²
	25 կգ / 5 մ²

Փաթեթավորում

Թղթե և պոլիպրոպիլենային պարկեր՝ 25կգ զտաքաշով:

Պահպանում

Պահպանել չոր միջավայրում և չվնասված պարկերով փայտյա տակդիրների վրա, +40°C-ից ոչ բարձր ջերմաստիճանի և 75%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 6 ամիս:

Անվտանգության կանոններ

- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով շնչառական օրգանների ապահովությունը:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում աչքը լվանալ մաքուր ջրով, անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

Ուշադրություն

- Խառնուրդի խտանալուց հետո չի թույլատրվում ջուր ավելացնել, քանի որ դա կհանգեցնի խառնուրդի կպչողունակության նվազմանը և կնպաստի ճաքերի առաջացմանը:
- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: